

թիւնը՝ ի վաղուց հաստատուած հաղորդակցութիւնները, որոնցմէ յառաջ եկան պատմական մեծամեծ անցքեր յօդուարնակիներին, որոնք այն ինչ մէկ անգամ բարձրագոյն կրթութեան միջոցները ձեռք բերին՝ միւսներէն յառաջ անցան և այնուշետե սոցա միշտ իրենցմէ յետ թողին։ Յայտնի է, որ նոյն խակ վայրենիները կը խոստովանին եւրոպացիների գերազանցութիւնը, բայց սա միայն այն ժամանակ՝ երբ երկու ցեղերը բաւական ժամանակ միմանց հետ յարաբերութիւն ունենան, վասն զի առաջին անգամէն անձնասիրութիւնը՝ որ մարդիս յատուկ է՝ նորանց արհամարհանք կազզէ զէպի ի եւրոպացիները։ Ե. յսպէս, օրինակ, Ամերիկացի բընիները կհամարին թէ Վատուած նախ սեամորթին ստեղծեց, յետոյ սպիտակին և յետոյ՝ վերջապէս՝ կարմրամորթին։ Նոքա եւրոպացիներին ծաղրելու համար «կաթնային երես» կանուանեն։ Ինօրդոն (Burton) ձանապարհորդը կպատմէ թէ արևմտեան Վ. փրիկէում Խզ - բայի բնակիչներն իւր ետևէն կզոռային։ Նայեցէք սցդ սպիտակին, դա զառամեալ կապիկի չնըմանիր։ Զէ կարելի մերժել որ վայրենիի անազապղնձեայ կամ վայլուն սև մորթը և մկնախիտ անգամները նորա համար օգտակար հակապատկեր կկազմեն թուլամորթ եւրոպացիի զէմքին հետ, որ վարկուած է «մոքի տկարութեամբ», ինչպէս ասել իին մի անգամ, բայց անհերքելի կմնայ այս՝ թէ մտաւորապէս աւելի զարգացած մարդկային ցեղերի մարմնի ազնուազոյն մասերը, զէմքին և սկաւառակի ձեւն աւելի գեղեցիկ կլննին։ Զենք կարող ասել թէ մարդկային ցեղեցիութեան վե-

րայ ունեցած գաղափարնիս անհիմն և խախուտ է, կամ թէ ճաշակի գործ է, որի մասին կարելի չէ վիճել, մարդի գծազրութեան այլանդակութիւնը յառաջ եկած են կամ հիւանդութիւններէ, կամ զէպի անամնական ախալ մերձենալէն։ Ե. յլ և այլ ցեղերի հետազօտութիւնը անհերքելի կերպով կապացուցանէ՝ թէ ինչպէս մարդկային զէմքի պատկերն հետպհետէ երթալով իւր նախնական անձունի ձեւն հեռացել և ազնուացել է։

(Կ ՀԵՐԱԳՈՐԾՎԱԾ)

ԱՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԻԱՍԽԱՆԸ

ԱԶԳԱՅԻՆ

ՏՕՆՈԽՄԲՈՒԹԻՒՆ Ո. ՆՈՒԱՆ

ՊԵՀԱՓՄ ՀԵՅՐԵՊԵՏԻ ԵՄԵՆԵՑՆ ՀԵՅՑ

Տ. Տ. ԳԵՂՋԻԱՅ Գ.

ԵՒ ՀՈՐՇՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՀ

ԳԵՂՋԻԱՅ ԵՄԵՐԵՎԱՆ

Ա. ԷՀՄԻԱՄՆԻ.

Ց Յ Ն Ա Կ Ա Խ Ա Մ Բ Ե Ր ա մ ս ո յ՝ յ ա ւ ո ւ ր տ օ ն ի Ս. Գ է ո ր գ ա յ՝ է ջ մ ի ա ծ ն ա յ Մ ա յ ր Ա թ ո ո ւ ր փ ա ռ ա ւ ո ր հ ա ն դ է ս ո ո վ կ ա տ ա ր ե ց Վ ե հ Հ Հ ա յ ր ա պ ե տ ի Տ. Տ. Գ է ո ր գ ա յ Դ. Ս ր բ ա զ ն ա գ ո յ ն կ ա թ ո ղ ի կ ո ս ի ա մ ե ն ա յ ն Հ ա յ ո ց ա ն ո ւ ա ն ա կ ո չ ո ւ թ ե ա ն ե ւ ն ո ր ա ս խ ր ա գ ո ր ծ ո ւ թ ի ւ ն ն ե ր է ն գ լ խ ա ւ ո ր ի ա յ ն է՝ Գ է ո ր գ ե ա ն ձ ե մ ա ր ա ն ի Զ ո ր ր ո ր դ Տ ա ր ե ղ ա ր ձ ի ն շ ա ն ա ւ ո ր տ օ ն ե ր ը ե ւ յ ի ր ա ւ ի մ ե ծ է Մ ա յ ր Ա թ ո ո յ ս հ ա մ ա ր ա յ ս է բ ա ր կ ո ւ տ օ ն ե ր ի խ ո ր հ ո ւ ր դ ը

եւ նշանակութիւնը. իւր Հայրապետի տօնի հետ սա տօնում է իւր բարեկարգութեան, վերանորոգութեան եւ յառաջադիմութեան տօնը: ձեմարանի տօնի հետ իւր նշանաւոր աղքային գործունէութեան եւ ազգի մեծամեծ յոյսերի տօնը: Ահա պատճառը՝ որով այս երկու տօների հանդէսները կատարում է Մայր Աթոռս հետզիետէ առաւելապէս իմն եւ փառաւոր կերպով եւ համակրութեամբ: Այստարի թէպէտ երկու նշանաւոր տօների գլխաւոր հեղինակը — Նորին Ա. Օծութիւնը Վեհ. Հայրապետ Ազգիս իւր տկարութիւնը շարժած լինելով՝ ստիպուած էր աւելի երկար մնալ ամառանոցում ի Բիւրական՝ եւ ներկայ չգտանուեցաւ ի տօնախմբութեանն, բայց եւ այնպէս՝ շատ փառաւոր էր եկեղեցական մասն հանդիսի եւ մեծ տպաւորութիւն գործեց բոլոր հանդիսականաց վերայ:

Առաւօտեան 11ժամին, սուրբ Պատարագից յետոյ՝ բոլոր Միաբանութիւնը՝ եկեղեցական հանդիսիւ՝ եւ պատարագիչ Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց զգեստաւորուած՝ ուղեւորուեցան Ա. Տաճարէն դէպի ձեմարանը արտաքին ճանապարհով երգելով պատշաճաւոր շարականներ: ձեմարանի աշակերտները զոյգ զոյգ շարուած՝ հանդիսի սկիզբն էին կազմում: Տեղական բնակչաց եւ մանաւանդ եկաւոր ուխտաւորաց բազմութիւնը հետեւում էին այս վտեմ հանդիսին կրօնական ջերմեռանդութեան դգացմամբ լցուած: ձեմարանին հասնելով՝ բոլոր հանդէսը կանգ առաւ ընդարձակ բակի հիւսի-

սային գրան սիւնազարդ եւ գեղեցիկ վանդակապատի առջեւ: Այս տեղ՝ բոլոր եկեղեցականները եւ աշակերտները մի լայն բոլորած եւ շրջան կազմելով՝ սկսեցին ձեմարանի Վեհափառ Հիմնադրի համագուցեալ Ծնողաց հոգւոց վրբկութեան համար Հոգեհանգստեան սովորական կարգը կատարել:

Հանգստեան կարգը աւարտելով՝ երբ եկեղեցականները հանեցին շուրջառները եւ բազմեցան աթոռների վերայ, ձեմարանի Ընդհանուր Կառավարիչ Գեր. Անդրէաս Ա. Արքեպիսկոպոսը կարգաց Վեհափառ Հայրապետի օրհնութեան կոնդակը զոր ուղարկած էր Տիւրականէն: Կոնդակի ընթերցումը վերջանալով՝ աշակերտները երգեցին Ա, ԿՇ Հանուլ երգը: Յետ այնորիկ՝ դարձեալ Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսը կարգաց ըստ պատշաճի աւուրն մի ճառ, ուր բացատրեց տօնախմբութեան նշանակութիւնը ձեմարանի վերաբերմամբ ընդհանրապէս՝ թողնելով գասատուութեանց հըսկող Արժանապատիւ Վահան Վարդապէտ Եպիսկոպոսը աւելեկութիւնները ձեմարանի ուսումնական մասին: Աւարտելէն եւ Հնկեցէն լոր ազգու երգը ասելէն յետոյ՝ Արժ. Վահան Վարդապէտ Եպիսկոպոսը բերանացի ասաց մի ոգեւորուած ճառ, ուր բացատրելով Վաղարշապատի եւ Ա. Էջմիածնի պատմական նշանակութիւնը իբրեւ կեդրոն Հայոց ազգի մտաւոր՝ կրօնական բարոյական եւ քաղաքական զարգացման, յիշեց որ նաեւ այսուհեան այս տեղ պիտի լի-

նի Հայոց ազգի կեղրոնքը, այստեղից պիտի ծագէ նորա նոր արշալոյսը եւլն: Ճամփ վերջում՝ համառօտ տեղեկութեամբ յայտնեց նա որ Ճեմարանի մէջ կան 95 աշակերտ հինգ դասարանի բաժանուած, առաջնոյ մէջ 15 աշակերտ, երկրորդում 23, երրորդում 25, չորրորդում 15 եւ հինգերորդում 17, թէ հարցաքննութիւններէն յետոյ՝ առաջնոյ մէջ մնացել են 7 աշակերտ եւ երկրորդի մէջ 1, եւ մի աշակերտ առաջինէն եւ մինը չորրորդէն արձակուած են բոլորովին իւրեանց ծուլութեան եւ յետագիմութեան պատճառով. թէ Ճեմարանը ունի 12 ուսուցիչներ, որոց մէջ են երկու եղիսկոպոս, երկու վարդապետական սարկաւագ (Զայնագրութեան) եւ եօթը աշխարհականիք, եւ այս 12 էն ութը հոգի ունին համալսարանական գիտութիւններ եւ վիճականներ, Ճառէն յետոյ՝ աշակերտները գարձեալ երգեցին Ո՛վ Տէր Աստուած երգը եւ ապա երկու աշակերտ՝ չորրորդ եւ հինգերորդ գասարաններէն՝ կարդացին համառօտ ողերձներ եւ հանդէսը վերջացաւ Պահպանիցվ, եւ բոլոր Միաբանները եւ ժողովրդէն մեծագոյն մասը բարձրացան, Ճեմարանի գեղեցիկ հանդիսարանը, ուր գասաւորուած էին, որպէս նաև վերի եւ ներքի նրբանցքների եւ մատենադարանի մէջ, աշակերտների գեղեցիկ նկարները — մատիտով գծուած, — վայելչագրութեան թերթերը Հայերէն, Ասերէն եւ Գաղղիերէն, եւ աշխարհագրական քարտեզները գոյնգոյն ներկերով: Մինչ-

դեռ հանգիսականները հետաքրքրութեամբ կզննէին Վեհափառ Հիմնադրի մեծադիր պատկերը, որ շրջապատւած էր դալար սստերով եւ զանազան թարմ ծաղիներով հիւսած մեծ եւ գեղեցիկ պսակով, աշակերտների գեղարուեստական աշխատութիւնները այլ եւ նրբանցքի մէջ կախ տուած աշխարհագրական քարտեզները, բնագիտական նկարները եւ այլ գեղեցիկ պատկերները, նաև մատենագարանը եւ բնագիտութեան (Փիզիքայ) եւ քիմիային դործիքները եւ պարագաները, որք գեղեցիկ կերպով գտաւորուած էին առանձին սենեակի մէջ՝ կից մատենադարանին աշակերտները երգում էին հանգիսարանի մէջ անդագար աղգային երգեր, մինչեւ որ զանգակի Ճարնը հնչեց եւ հրաւիրեց զնոսա ի սեղանատուն եւ բոլոր հանգիսականները մեկնեցան:

Միեւնոյն միջոցում՝ Մայր Աթոռու ընդարձակ սեղանատան մէջ պատրաստուած էր հարիւրաւոր անձանց համար պատուական ճաշ, բոլոր սեղանատունը եւ մանաւանգ Հայրապետական գմբեթակարգ սեղանը նոյնպէս զարդարած էին գալար սստերով եւ ծաղկներով: Հացկերոյթի ժամանակ Մայր Աթոռոյա գպիրները անգադար երգում էին աղգային երգեր, եւ ուրախութիւնը վերջացաւ պատշաճաւոր կեցչներով եւ ճառախօսութիւններով:

Աւարտելով սոյն յօդուածը՝ կցում ենք այստեղ Ճեմարանի բակում կարգացուած ճառերը եւ Ճեմարանի աշակերտների կողմէն տու Վեհափառ Հայ-

բագետ առանձին սուրհանդակով ու-
ղարկուած երկու շնորհաւորաւթեան
ու զերծներ:

Ա.Հաւասիկ Ճեմարանի առջեւ կար-
դացուած ճառ երը:

ԵՒ ՊԱՏՈՒԿԱՆ ՀԱՆԳԻԾ ԼԿՈՒՆՔ.

Արկին է այսօր մեզ առիթ ուրախութեան՝ տօն անուանակոչութեան ասեմ Տ. Տ., Գևորգայ Դ.-ի Արքակնագոյն Հայոց և չորսորդ տարելարձ Շեմարտին Եղիշ Հայոց և կը պատկան է հուանդուն զգացմանց սրտից Զերոց՝ ասեմ. Ծնորհաւոր լիցի մեզ տօնս այս յուրախութիւն մ.ծ. Խւ թեպէտ սովորական է յայսպիսի դէպս ընդարձակ ատենաբանութեամբ ի նկար առնուլ զմեծագործութիւնս հեղինակի տօնախմբու-

թեան ի բերկրամս հանդիսականաց, բայց
ես աւելորդ վարկանիմ զայդ ի խորհրդա-
ւոր պահուս յայսմիկ, քանզի տեսանեմ
ահա յերես Ձեր ամեննեցուն ակներեւ հա-
ւաստիս հոգեկան անկեղծ ինդութեան և
երախտազիտութեան առ բազմերախտ
գորովագութ և այրն հասարակաց վասն
մեծամեծ դործոց նորա և մանաւանդ վա-
սըն ակնկալեալ բազմազիմի արդեանց Ա.
Գէորգեան Շեմարանիս: Եւ ո ոք չիցէ
խելահա՞ զի ի շարս տանձալի սիրազոր-
ծութեանց Կորին Արբութեան ի փառս
Հայաստանեայց սուրբ և առաքելական
ուղղափառ Եկեղեցւոյ և ի բարոյական
յառաջադիմութիւն Հայկագնեալց իբրև

արձան յաւիտենական յիշատակոց հանդիսանալ ար Ճեմարան:

Այլ զի՞նչ պարտ իցէ առել զիմս
նուաստութիւնէ, որում յանձնեցաւ Վար-
չութիւն Շեմարանիս, եթէ ոչ առանձին
իմն այրապետական շնորհաց առ խ հա-
մարիմ ապացոյց զայս իմ ներկայ պաշ-
տօն. թէև շնորհ, զոր քաղցր է ինձ ընդ-
դրկել որգիական հնազանդութեամբ, սա-
կայն ընդ նմին գործ մեծ և ծանրագոյն, զոր
աջակցութեամբ և զործակցութեամբ զիտ-
նական և պատւարժան ուսուցչաց մերոց
հոգեշնորհ եկեղեցականաց և աշխարհա-
կանաց և մանաւանդ իմաստուն խրառուք
և հրահանդօք Ահշափառ կիմնադրի և
ընդ բարձրագոյն հովանաւորութեամբ Կո-
րին փութացայց կատարել իմովսաննե,
յուսալով յամենակարողն Աստուած, զի
պարզեցաց մեծի հաստատութեանս զիա-
տարեալ յառաջադիմութիւնընդ բազում
ժամանակս ի փրկութիւն ժողովրդեան իւ-
լոյ:

Մնաց ինձ եւ առ Զեղ զիմել, ով սրբ-
բազումար Հարը և Խղբարը, և ինդրել ի
ձենջ զանկեղծ և զմտերմական համակրու-
թիւնս ձեր առ Շեմարանս և ձերովսանն
օդնութիւն ի յարատե պայծառութիւն
սորին, առ Զեղ զիմել, ով զիանական ու-
սուցիչք և խնդրել զեռանդուն գործակցու-
թիւն Զեր ի բարոյական և յուտումնական
բարեկարգութիւն տաճարիս զիառութեան,
առ Զեղ զիմել, ով ուժումնատենչ աշա-
կերտք և հրաւիրել զեղ ի մեղուածան
աշխատութիւն և ի բարեբարոյ կննցաղա-
վարութիւն եղբայրսիրութեան ի սրբավայր
տեղուջս մտաւոր և բարոյական կրթու-
թեան ձերոյ: Երանի է ձեղ, զի ահա օր

քան զօր ծաւալին ի վերայ ձեր հայրաւ-
դութ խնամք Վեհափառ Ծարերարին ձե-
րոյ, որ աւասիկ գումարեաց աստ վասն ձեր
զբանիրուն ուսուցիչս եկեղեցականս և աշ-
խարհականս համալսարանական զիտու-
թեամբ ճոխացեալս և հռչակեալս զիտնա-
կան զրուածովք: Ուստի հարկ և պար-
տաւորութիւն կայ ի վերայ ձեր փութալ
քաղել զամենայն օգուտ ի սոյնպիսի բա-
րեցաջող հանգամանաց և անխոնջ ջանասի-
րութեամբ ամբարել ի միտս ձեր զուսմունս
պէս պէս զիտութեանց, որով միայն կարէք
հանգերձ հեղ և պարկեշտ վարուք երախ-
տագէտ լինել առ Տէր Ծարերարն ձեր և ա-
ռիթ Նորին միսիթարութեան, որ յան-
չափ ճկունս երկանց ծնաւ զայս տուն վըր-
կութեան և զիեցուցանէ զայս հայրազութ
խնամովք և զիեցուցէ առ յապայն:

Յաւարտ բանիս՝ թողլով Ըրժանապա-
տիւ Վահան Վարդապետի հաղորդել ձեղ
կարեոր տեղեկութիւնս ըստ ուսումնական

կառավարութեան Ճեմարանիս՝ աղաչեմ
զԳերապատիւ Հարսդ՝ զեղրարս և ըզ-
հանդիսականս համօրէն՝ վերառաքել ըզ-
լիաշութիւն բարեմաղմութիւնս մեր առ-
բարձրեալն Աստուած, զի անսահման բա-
րերարութեամբ իւրով չնորհեցէ Վեհա-
փառ Հայրապետիս մերում զանվտանգ և
զանխոռով կեանս ընդ ամս ձիզս, տացէ
նմա կարողութիւն առ ի շարունակել և
կատարել զմեծագործութիւնս իւր ի պայ-
ծառութիւն Մայր Աթոռոցս և Հայա-
տանեաց Եկեղեցւոյ և ի յառաջաղիմու-
թիւն Ազգիս. պահպանեացէ ընդ հովա-
նեաւ սրբոյ Խաչի Միածնի Որդոյ իւրոյ
զԱ. Վեհորդիան Ճեմարանս մեր. ծաւա-
լեսցէ զշնորհս Հոռուցն Արբոյ ի միտս ու-
սումնակար աշակերտաց սորին և պար-
զեեացէ մեղ ամենեցուն զհողեկան միհ-
թարութիւնս ի փառս սրբոյ Երրորդու-
թեան. եղիցի և եղիցի:

ՅԵՐՈՒ ՏԵՂԻ ՄԵՐՈՅՆ ԳԵՐՐԳԵՐ ԶԵՐԱՎԵՐԻ

ԵՒ Ի ՀՈՐԹՈՐԴԻ ՏԱՐԵԴԵՐՉԻ ԴԵՄԵՐԵՆԻՍ

Պ Ա Ղ Ե Բ Ֆ Զ.

Որ իմբթան կանգնիս տաճարդ Հայաստանեայց ի պարգեւ,

և զանազօտ սրփաես ըզլոյս իբրեւ զարփի շուրջ ըզքեւ,

և Մոլոխեան զերթ ամսն լուսոյ յառաջընթաց հորդես մեզ

Զուզի՛ իլոյս ճշմարտութեան, զուզի՛ յուսման ասպարէզ:

Քեւ նորոգեալ արդ միւսանգամ կենցաղի դար Մեսրոբայ

ի քէն ելցեն մեն մի Եղնիկք, Մովսէս, Դաւիթ, Եղիշայ:

Քեւ սրբեսցին դառն արտասուք Ոգւոյն մերոյ Հայրենեաց,

և պարզեսցի աղեղն յերկինս ի հաշտութիւն Հայկազանց:

Մի եւս ամպրուզք մըրըրկայոյդք փոթորկեսցին զքոյդ գըլխով,

և մի արկածք գըժոխըմբերք վրդովեսցեն զկեանսգ անխըռռալ.